**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ՆԲՄԾՁԲ-24Խ/28 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ՆԲՄԾՁԲ-24Խ/28 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի և «Փրոմռուշն» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Հաստատվել է Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 1-ի:
2. Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ում և Հավելված 2-ով սահմանված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ում գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV), շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. 79411210/1:
3. Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները, նախատեսված ֆինանսական միջոցների մասով Պայմանագիրը համարվել է ուժի մեջ մտած՝ 2026 թվականի հունվարի 5-ից և կատարման վերջնաժամկետ սահմանվել է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ:

**Փոփոխության հիմնավորում՝** 2024 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ՆԲՄԾՁԲ-24Խ/28 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ**